Արմինե Բալասյան

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ

Այսօր ՀՀ բուհերում անհրաժեշտություն է առաջացել ունենալու բարձրագույն կրթության որակի կառավարման այնպիսի համակարգ, որը կհամապատասխանի հասարակության ու պետության ներկայիս պահանջներին և զարգացման հեռանկարներին, ինչպես նաև հավասարապես հասանելի կլինի բոլոր քաղաքացիներին: Ուստի, այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել կրթության բովանդակության, կրթական տեխնոլոգիաների, կրթական ոլորտի կառուցվածքի, կադրային ներուժի մակարդակի և տնտեսության նոր խնդիրների միջև օրեցօր խորացող բացը լրացնելու անհրաժեշտությունը և մշակել համապատասխան մեխանիզմներ՝ բարձր որակավորում ունեցող մասնագետների բավարար պաշար ստեղծելու համար: Սա էլ իր հերթին ներկա փուլում բարձր որակավորում ունեցող անձնակազմի պատրաստումը դարձնում է առաջնահերթ խնդիր հասարակության և պետության գործունեության մեջ: Իսկ դրա լուծման հիմնական գործիք է հանդիսանում բարձրագույն մասնագիտական կրթության որակի կառավարման համակարգի զարգացումը:

«Կառավարումն անհրաժեշտ է որակի հասնելու համար»:

Ու. Է. Դեմինգ

Հիմնաբառեր — որակի կառավարում, գիտելիքահեն տնտեսություն, գլոբալ ու տարածաշրջանային կրթական համակարգեր, բարձրորակ կադրեր, կրթության կառավարում

Ներկա դարաշրջանում Հայաստանը քայլեր է ձեռնարկում՝ ինտեգրվելու համաշխարհային տնտեսական, քաղաքական ու մշակութային տիրույթ: Գլոբալիզացիան, շուկայական մրցակցությունը, սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտների գիտատեխնիկական զարգացումը պայմանավորում են անցումը գիտելիքահեն տնտեսության: Այդ ռազմավարական խնդրի հաջող լուծման առաջնային միջոցներից մեկը տվյալ երկրում գիտության, մշակույթի և կրթության համապատասխան մակարդակն է՝ որպես Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումն ու բարգավաճումը կանխորոշող կարևորագույն գործոն:

Հայաստանը, որպես համաշխարհային գործընթացներին ակտիվ մասնակցող և գիտելիքների տնտեսություն ունենալու անհրաժեշտությունը գիտակցող երկիր, պետք է նաև քայլեր ձեռնարկի՝

բարձրագույն որակյալ կրթական համակարգի ձևավորման ուղղությամբ: Այդուհանդերձ, պետք է հաշվի առնել այդ ոլորտում կուտակված համաշխարհային փորձը, գնահատել սեփական կարողություններն ու բարձրագույն կրթական համակարգի ազգային առանձնահատկությունները՝ այս ամենի վրա կառուցելով բարձրագույն դպրոցի որակի քաղաքականության արդյունավետ և նպատակասլաց համակարգ:

Բարձրագույն մասնագիտական կրթության որակի կառավարման համակարգի ձևավորման ու զարգացման խնդրի արդիականությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Այսօր արդեն կասկածից վեր է այն, որ XXI դարում պետության տնտեսական ու սոցիալական աճի որոշիչ գործոն է հանդիսանում ինտեգրված գլոբալ ու տարածաշրջանային կրթական համակարգերի ստեղծումը, տեղեկատվական-կրթական տեխնոլոգիաների զարգացումը, որոնք առավելագույնս նպաստում են անձի հոգևոր ներուժի, հասարակության ու պետության զարգացմանը: Մեծագույն խնդիր է բուհական ոլորտում բարձրորակ կադրերի պատրաստումը, գիտատեխնիկական ձեռքբերումների զարգացման աստիճանը, ինչի հիմքում ընկած է որակյալ կրթությունը: Ուստի, այսօր, ավելի քան երբևէ, արդիական է դառնում կրթական գործունեության որակի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը: Վերջինիս հանդեպ հետաքրքրության աճն էլ մեծապես պայմանավորված է 1998 թ. Սորբոնյան Հռչակագրով ամրագրված եվրոպական երկրների բարձրագույն կրթության որակի համակարգի ներդաշնակեցման գործընթացով, ինչպես նաև Բոլոնյան Հռչակագրով, որի միջոցով որակի ապահովումը դարձավ այդ գործընթացին մասնակից երկրների առաջնային խնդիրը:

1990-ական թվականներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած արմատական փոփոխություններն իրենց մեծ ազդեցությունն են ունեցել կյանքի բոլոր ոլորտների՝ այդ թվում և կրթական համակարգերի վրա: Գործող հասարակական-քաղաքական ինստիտուտների փլուզումն ու նորերի բացակայությունը ժամանակի ընթացքում բերել է նրան, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում առկա չէ համապատասխան որակի կառավարման միասնական գաղափար, կրթական ծառայությունների որակի արդյունավետ մեխանիզմների ապահովում, վերահսկողություն, գնահատում ու մշտական բարելավում: Եվ չնայած վերջին տասնամյակում նկատվում է դրական աճ, այնուամենայնիվ, բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում պետական ֆինանսավորման կրճատումն ու մի շարք այլ խնդիրներ պատճառ

են հանդիսացել կրթության որակի զգալի նվազման: Այս ամենի արդյունքում Հայաստանում անհրաժեշտություն է առաջացել վերակազմավորելու բարձրագույն կրթության որակի կառավարման արդյունավետ համակարգ՝ միաժամանակ սահմանելով «որակի կառավարում» հասկացությունը, տալով վերջինիս առանցքային գործընթացների ու տարրերի պարզաբանումը բուհական ոլորտում:

Ըստ Մարքսի՝ որակն օբյեկտին բնորոշ հատկանիշների ամբողջությունն է, որն առնչվում է վերջինիս՝ սահմանված և ենթադրյալ պահանջմունքները բավարարելու կարողությանը: Ջ. Ջուրանը սահմանում է այն որպես ապրանքի հատկանիշ, որն ուղղված է վերջինիս գործառույթները ճշգրիտ իրականացնելուն: [3] Որակի համակարգը կազմակերպության կառուցվածքի, մեթոդաբանության, գործընթացների ու ռեսուրսների այն ամբողջությունն է, որն անհրաժեշտ է որակի կառավարումն իրականացնելու համար: Իսկ որակի կառավարումը կառավարման ընդհանուր գործառույթի իրականացման այն ասպեկտն է, որը կանխորոշում է որակի, նպատակների ու պատասխանատվության ոլորտի քաղաքականությունը, ինչպես նաև իրականացնում դրանք այնպիսի միջոցներով, ինչպիսիք են որակի պլանավորումն ու դրա օպերատիվ կառավարումը, ապահովումն ու բարելավումը որակի համակարգի շրջանակներում: [5]

Լ. Հարվին ու Դ. Գրինը առանձնացնում են բարձրագույն կրթության որակի 5 հիմնական մոտեցում՝ բացառիկություն, գերազանցություն, կատարելություն, նպատակներին հասնելու աստիճան, արժութային համապատասխանություն, վերափոխում (կատարելագործում, ուսանողների գիտելիքների ձեռքբերում կամ ավելացում): [8] Ըստ Կ. Քեմփբելի և Կ. Ռոզսնայի՝ որակը բնութագրվում է որպես կատարելություն, նպատակներին հասնելու աստիճան, նորմերի կամ չափանիշների շեմ, համապատասխանեցում արժեքներին, բարելավում կամ կատարելագործում: [6]

Հայաստանում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացները (լիցենզավորում, հավատարմագրում և ընթացիկ ատեստավորում) և դրան առնչվող մարմինների լիազորությունները այդ բնագավառում կարգավորվում են Կրթության մասին ՀՀ օրենքներով, ինչպես նաև Լիցենզավորման և հավատարմագրման կարգով: [9, 10]

Որակի ապահովման քաղաքականության նպատակն է բարձրացնել բուհի ուսումնական, հետազոտական և կառավարման գործընթացների արդյունավետությունը: Այն ընդգրկում է բուհի գործունեության բոլոր հիմնական ասպարեզները՝ նշանակետ ունենալով համապատասխանեցնելու դրանք բուհի ստրատեգիական նպա-

տակներին և ապահովելու ուժերի առավելագույն ներդրում այդ նպատակների իրականացման համար: [11]

Բուհի համար որակի ժամանակակից կառավարման համակարգ ունենալու անհրաժեշտության չափորոշիչ է հանդիսանում ինտեգրումը համաշխարհային պահանջներին, սպառողի ու հասարակության կողմից ճանաչելիությունը, համալսարանի զարգացմանը նպաստող ներդրողների առկայությունը, բարձրագույն ուսումնական հաստատությունում հուսալի ու շարժուն կոլեգա փնտրելու հայ ու օտարերկրյա գործընկերների ակտիվ գործունեությունը, հենց իր՝ ուսանողի նախաձեռնությունը՝ ընտրելու այնպիսի բուհ, որտեղ նա ինքը կկամենար սովորել: Ուստի որակի կառավարման ոլորտի ուսումնասիրություններում ուշագրավ է դառնում գլոբալ վերափոխումների ազդեցությունը ազգային ուսումնական համակարգերի վրա: Հարկ է նշել, որ այստեղ որակի ապահովումը կարևոր է ոչ միայն համալսարանների, այլ նաև կրթության գլոբալացման պարագայում, և եթե առաջին դեպքում խնդիրն ավելի տեղային բնույթ է կրում, երկրորդ դեպքում կարող է կրթության բովանդակությունը փոխվել, ինչը կնպաստի ժամանակի ընթացքում ազգային արժեքներից և ավանդույթներից հեռանալուն:

«Գլոբալիզացիա» հասկացության հետ շատ հաճախ նույնականացնում են «միջազգայնացում» տերմինը, սակայն կարծիքները սկզբունքայնորեն տարբեր են: Օրինակ՝ այն սահմանվում է որպես «միջազգային ոլորտում կրթական տիրույթի կազմավորում, ինչը ուսանողների, դասախոսական անձնակազմի միջպետական փոխանակման, բուհերի համագործակցության, համատեղ հետազոտական աշխատանքների կատարման հիմք է հանդիսանում...»: [2] Այսպիսով, ի տարբերություն գլոբալիզացիայի, որի նպատակը կրթական համակարգերի միավորումն է, բարձրագույն կրթության գլոբալ համակարգի ստեղծումը, միջազգայնացումն ընդամենը կանխորոշում է միջազգային որոշ տարրերի մուտքը բուհերի գործունեության մեջ՝ այդուհանդերձ պահպանելով բարձրագույն կրթության ազգային արժեքները: Բարձրագույն կրթության միջազգայնացման գործընթացի կարևորությունը որակի կառավարման ասպարեզում այն է, որ ուսանողների և դասախոսների շարժունության աճը, միջբուհական համագործակցությունն ու այդ ոլորտում առկա այլ միտումները պահանջ են ներկայացնում որակի ապահովման ընթացիկ բարեփոխումների հանդեպ: Եվ եթե միջազգայնացման շնորհիվ միջազգային կրթական շուկան իրոք մրցունակ դառնա, այդ շուկայում առկա բուհերը կփորձեն մրցունակ դառնալ հենց բարձրագույն կրթության որակի հաշվին: [9]

Սակայն, մյուս կողմից էլ Հայաստանում սոցիալ-տնտեսական վերափոխումների անհետևողականության ու անավարտության, սոցիալ-քաղաքական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության կայացման խնդիրների հետևանքով բարձրագույն մասնագիտական կրթության համակարգում լուրջ ձևախախտումներ են նկատվում, ինչպես օրինակ, դրա կառուցվածքում, բովանդակության մեջ, գործառույթներում, գիտամանկավարժական կադրերի պատրաստման, մի շարք մասնագիտությունների վարկանիշների նվազման արդյունքում: Դա էլ «ուղեղների արտահոսքի»՝ բարձր որակավորում ունեցող կադրերի անբավարարության պատճառ է դառնում՝ որակապես փոխված սոցիալական պայմաններում աշխատելու ընդունակ ու պատրաստ որակյալ մասնագետներին թույլ տալով արտասահմանյան երկրներ մեկնելու:

Ստեղծված իրավիճակը շտկելու, և Հայաստանում պետական մարմինների օժանդակությամբ գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական աճ ապահովելու նպատակով՝ հասարակական տարբեր կազմակերպությունների կողմից պետք է ձեռք առնվեն բազմակողմ միջոցառումներ՝ բարձրագույն կրթական համակարգի արդիականացման, արդյունավետության ու որակի՝ հանրության կողմից ընդունելի չափորոշիչներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Բուհը գիտական ներուժ ունի, որը թույլ է տալիս իր սեփական կառավարման համակարգը կառուցելու, սակայն նման բացառիկությունը թույլ չի տալիս նույն համակարգը կիրառելու մյուս բուհերում, դինամիկ զարգացնելու և ճանաչելի դարձնելու մյուս կազմակերպություններում: Այստեղ անհրաժեշտություն է առաջանում կիրառելու որակի կառավարման հայտնի մոդելը:

1986 թ. Ստանդարտացման միջազգային կազմակերպությունը (ISO) ձևակերպեց, իսկ 1994 թ. հստակեցրեց «որակ» հասկացությունը: Որակը օբյեկտի բնութագրիչների ամբողջությունն է, որը համապատասխանում է սահմանված կամ ենթադրյալ պահանջներին: [4] Ներկայումս համաշխարհային ստանդարտների կիրառումը, դրանց համապատասխան սերտիֆիկատների առկայությունը համարվում է կազմակերպության հաջող գործունեության երաշխիքը՝ ընձեռելով կազմակերպություններին որոշակի մրցակցային առավելություններ: [1]

Բարձրագույն կրթության որակի կառավարման ժամանակակից համակարգը ամբողջությամբ չի նպաստում բուհական շատ ոլորտների որակի բարձրացմանը, չնայած վերջին տարիներին դրական միտում է նկատվում այդ գործընթացում, ինչի հետևանքով էլ առաջանում է բարձրագույն կրթության որակի կառավար-

ման համակարգի այնպիսի մոդելի մշակման անհրաժեշտություն, որը թույլ կտար բարձրացնելու դրա գործունեության արդյունավետությունը, սոցիալական պահանջարկը, նորարարական ուղղվածություն կհաղորդեր ու ժամանակակից հայ հասարակության ու պետության բարդ սոցիալ-մշակութային զարգացման պայմաններում ամբողջապես կիրականացներ կրթության օպտիմալացումն ու դրա հետ կապված առաջնահերթ ուղղությունները: Ընդ որում, բարձրագույն կրթության որակի կառավարման համակարգի օպտիմալացման առանցքային ուղղությունը բարձրագույն կրթության որակի կառավարման համակարգի տարրերի միջև առկա կապերի կատարելագործումն է, քանի որ հենց այդ ուղղությամբ է իրականացվում տվյալ համակարգի՝ իրարից անջատ տարրերի միավորումը մեկ միասնական, կայուն մեխանիզմի մեջ:

Այնուամենայնիվ, հայ հասարակության գործունեության նյութատնտեսական ոլորտում կարելի է ինտելեկտուալ, իրազեկ, ստեղծագործական ու մասնագիտական կարողություններով օժտված կառավարիչների հանդիպել, ովքեր խորապես տիրապետում են շուկայական տնտեսության առանձնահատկություններին, կարող են աշխատել մրցակցության պայմաններում, ծայրահեղ ճգնաժամային իրավիճակներում, ստեղծագործաբար լուծել երկիրը նորարարական զարգացման տանող բարդ խնդիրները: Իսկ բարձրագույն կրթության որակի կառավարումն էլ կարող է խթանել սոցիալական ոլորտում որակյալ մասնագետների պատրաստման աճին, ինչը հետագայում կհանգեցնի հասարակության սոցիալական կառուցվածքի նոր որակական «հեղափոխության»՝ դեպի կայունացումն ու օպտիմալացումը, դրական ուղղվածություն կհաղորդի բնակչության սոցիալական շարժունությանը, կտանի առողջապահական խնդիրների, ժողովրդագրության, կրթության, զբաղվածության, սոցիալական աշխատանքի, հոգեբանական օժանդակության և այլնի գիտական հանգուցալուծման: Բարձրագույն կրթության որակի բարելավումն ամեն կերպ բարերար ազդեցություն կունենա հայ հասարակության հոգևոր, մշակութային, կրթական ոլորտի զարգացման վրա, քանի որ միայն պրոֆեսիոնալ պատրաստվածություն ունեցող կադրերը կարող են լուծել այդ ոլորտներին հատուկ այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են հայ ազգի հոգևոր վերածնունդը, նրա գիտական էլիտայի ձևավորումը, մշակույթի, տեխնիկայի, արվեստի, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացումը և այլն:

Վերջապես, հարկ է նշել, որ, չնայած, Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում ներկա պահին ընթացող բարեփոխումները մասշտաբային բնույթ

են կրում, այնուամենայնիվ առկա է գործոնների մի համախումբ, որոնք արգելք են հանդիսանում Հայաստանում բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում որակի արդյունավետ կառավարման, ինչպես օրինակ՝ բարձրագույն մասնագիտական կրթության անհավասար բաշխումը երկրի ողջ տարածքում և դրա հետ կապված անհասանելիությունը շատ վայրերում, բարձրագույն մասնագիտական կրթության կադրային քաղաքականության շատ ցածր արդյունավետությունը, ֆինանսավորման պատշաճ համակարգի բացակայությունը, անհամապատասխանությունը բուհի շրջանավարտի մասնագիտական մակարդակի և գործատուի կողմից առաջադրված պահանջների միջև, բուհերի ուսանողների և դասախոսների պարբերական վերապատրաստման ու վարկանիշային գնահատման անլիարժեքությունը, և այլն: Այս ամենը առանցքային լուծում է պահանջում, այլապես ավելորդ կլինի խոսել Հայաստանում բարձրագույն կրթության որակյալ համակարգի առկայության մասին:

Ընդհանրացնելով աշխատանքը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ բարձրագույն կրթության որակի ապահովմանն առնչվող խնդրի ուսումնասիրությունը առկա է բուհական գործընթացների բոլոր ոլորտներում, ինչպես նաև բարձրագույն կրթության կառավարման բոլոր մակարդակներում, քանի որ որակը համընդգրկուն կատեգորիա է դարձել և կախված է բուհական բոլոր գործառույթների արդյունավետ իրականացումից, սակայն դեռ վաղ է տվյալ ոլորտի ձեռքբերումների առնչությամբ որևէ դատողություն անել. ներկայումս բարձրագույն կրթության որակի կառավարմամբ զբաղվող ազգային մարմինները, երկրի ղեկավարությունը, միջազգային կազմակերպությունները, ինչպես նաև հենց բուհերը պետք է շատ ջանքեր ներդնեն բարձրագույն կրթության որակն ապահովող հասկացությունների, ռազմավարության ու քաղաքականության կիրառման և կատարելագործման հարցում: Ցանկացած բարեփոխում պետք է համապատասխան մշակում անցնի, հիմնավորվի ազգային առանձնահատկությունների տեսանկյունից: Պետք է հաշվի առնել ինչպես ավանդական տեսակետները, այնպես էլ, որպես մեկ միասնություն, կրթության, տնտեսության և հասարակության ներկայիս պայմաններն ու կրթական համակարգի առջև ծառացած ապագա պահանջները:

Գրականություն

1. Սուվարյան Յու. Մ. «Մենեջմենթ»,- Եր.: Տնտեսագետ, 2009, էջ 428
2. Аветисян П.С. Формирование единого образовательного пространства СНГ в условиях глобализации (социально-философская концепция) / Монография. – Ер.: Изд-во «Гитутюн» НАН РА, 2007. – С. 202-203.
3. Джуран Дж. М. Качество и прибыль. – М.: Изд-во стандартов, 1970. – 198 с.
4. Миронов М. Г. Управление качеством. М., Проспект, 2007, с.4
5. Родченко В. В. Международный менеджмент: Учеб. пособие. — 2-е изд., стереотип. — К.: МАУП, 2002. — 240 с.
6. Campbell C., Rozsnyai C., Quality Assurance and the Development of Course Programmes, Papers on Higher Education, Regional University Network on Governance and Management of Higher Education in South East Europe, Bucharest, UNESCO. 2002. – P. 19-20
7. Dirk Van Damme. Internationalisation and Quality Assurances - Towards Worldwide Accreditation. European Journal for Education Law and Policy, vol. 4, 2000. – P. 1-20
8. Harvey L. and Green D., 1993, Defining quality// Assessment and Evaluation in Higher Education, 18, № 1. – P. 9–34
9. Հայաստանի Հանրապետության կրթական գործունեության լիցենզավորման կարգ: Հաստատված է ՀՀ կառավարության 2000 թ. հուլիսի 7-ի N372 որոշմամբ:
10. ՀՀ Օրենքը Կրթության մասին, ընդունված 14. 04. 1999թ.
11. Որակի ապահովման բուհական համակարգեր: Ուղեցույց – Եր.: 2009թ. – 200 էջ

АННОТАЦИЯ

Армине Баласян

НЕОБХОДИМОСТЬ УПРАВЛЕНИЯ СОВРЕМЕННОЙ СИСТЕМЫ КАЧЕСТВА В ВУЗАХ РА

Сегодня, для обеспечения высшего образования, соответствующего требованиям современности и перспективам развития социума и государства, его равной доступности для всех граждан, необходима оптимизация системы образования на основе своевременного и эффективного учёта всеми субъектами управления качеством высшего образования. Для преодоления углубляющегося разрыва между содержанием образования, образовательными технологиями, структурой образовательной сферы, уровнем ее кадрового потенциала и задачами

новой экономики необходимо создать соответствующие механизмы воспитания достаточного резерва высококвалифицированных специалистов, что и является целью изучения этой статьи. Следовательно, на современном этапе подготовка высокопрофессиональных кадров становится приоритетной задачей в деятельности общества и государства. А главным инструментом её решения является развитие системы управления качеством высшего профессионального образования.

ANNOTATION

Armine Balasyan

THE NECESSITY OF MODERN QUALITY MANAGEMENT SYSTEM IN UNIVERSITIES OF RA

Today in Armenian universities it is necessary to have such a quality management system of higher education that will meet the current demands and development perspectives of the society and the state, and will be equally available to all citizens. Hence, the aim of this article is to examine the growing need of the deepening gap between content of education, educational technologies, structure of educational sphere, the potential of the staff and new economic problems and develop appropriate mechanisms to create sufficient reserves for highly qualified professionals. In turn, the preparation of highly qualified personnel becomes a priority problem in the society and the state. And the primary tool of its solution is the development of quality management system of higher education.

arminebalasyan@gmail.com